

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԱՁ ՆԱԶԱՐԸ



891.995
 Թ-95

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՔԱՁ ՆԱԶԱՐԸ

1.

Լինում է չի լինում մի խեղճ մարդ՝ անունը Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՛նքան էլ վախկոտ, է՛նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թէկուզ սպանէիր: Օրը մինչեւ իրիկուն կնգայ կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնգայ հետ շենքն է դուրս գալի: Որ շենքն է դուրս գալի՝ տեսնում է ճրրքճրրքան լո՛ւս-լուսնեակ գիշեր՝ ասում է.

-Այ կնիկ, ի՛նչ քարան կտրելու գիշեր է՛... Միրոս ասում է՝ վեր կաց գնա Հնդրատանից եկող Շահի քարանը կտրի բեր տունը լցրու...

կնիկը թէ.

-Չէնդ կտրի, տեղդ նստի, քարան կտրողիս մտիկ արա...

Նազարը թէ.

-Անգգամ կնիկ, ինչո՞ւ չես թող անում ես գնամ



100564 - ԿԶ

1040-2006

քարուան կտրեմ քերեմ տունը լցնեմ: Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակում ես իմ առաջը խօսես:

Որ շատ կռում է՝ կնիկը տուն է մտնում դուռը փակում:

-Հո՞ղեմ եղ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարուան կտրի:

Էս Նազարս մնում է դռանը: Վախից լեղապատառ է լինում: Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում: Ճարը կտրած գնում է մի պատի տակի կույ է գալի, դողալով գիշերն անց է կացնում մինչեւ լուսը բացում է: Նազարը խռոված պատի տակին արեկող արած սպասում է, որ կնիկը գայ տուն տանի ու միտք է անում: Ամառայ շոգ օր՝ գազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի-ճանճերը գալիս են սրա քիթ ու պռունգին վեր գալի, լցում: Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդում են առաջին վեր թափում:

-Վա՛հ, ես ինչ եր... մնում է զարմացած:

Ուզում է համրի թե մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:

-Վա՛հ, ասում է, ես էսպես տղամարդ եմ էլ էլ

ու մինչեւ էսօր չեմ իմացել... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնգայ կողքին վեր ընկել...

Էստեղից վեր է կենում ուղիղ գնում իրենց գիղի տերտերի մօտ:

-Տէ՛րտեր, օրհնեա ի տեր:

-Աստուած օրհնի, որդի՛ս:

-Տէ՛րտեր, բա չես ասիլ էսպես-էսպես բան:

Պատմում է իր քաջագործութիւնը ու հետն էլ յայտնում է, որ պետք է իր կնգանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անյայտ չըմնայ, ամենքն էլ կարդան իմանան: Տէրտերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրայ գրում է.

Անյաղթ հերոս քաջըն Նազար,

Որ մին զարկի ջարդի հազար:

Ու տալիս է իրեն:

Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի ժանգոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարեւանի իշին նստում ու գիղից հեռանում:

2.

Իրենց գիղից դուրս է գալի մի ճամփայ է ընկնում ու գնում: Ինքն էլ չի իմանում թե եղ ճամփէն ուր է տանում:



Գնում է գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է գիւղից հեռացել է: Էստեղ սիրտն ահ է ընկնում: Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մրմռալ, երգել, իրեն իրեն խօսել, իշի վրայ բարկանալ: Քանի հեռանում է՝ էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է՝ էնքան ձէնը բարձրացնում է, սկսում է գորգոռալ, հարայ-հրոց անել, հետն էլ միւս կողմից էշն է սկսում զռալ... Էս աղմուկից ու աղաղակից թռչունները մօտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանանչից են ջուրը թափում...

Նազարը ձէնն ատելի է գլուխը գցում. իսկ որ մտնում է անտառը-թում է՝ թէ ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի ետեւից՝ որտեղ որ է գազան է յարձակելու կամ աւազակ. սարսափած սկսում է գորգոռալ, ոնց գորգոռալականջող ոչ լսի:

Դու մի՛ ասիլ հենց էս ժամանակ մի գիւղացի ձին քաշելով անտառում միամիտ գալիս է: Էս զարհուրելի ձէնը ականջն է ընկնում թէ չէ կանգնում է.

-Վա՛յ, ասում է, ո՞նց թէ իմն էլ էստեղ եր հատն լ. կայ-չկայ էս աւազակներն են...

Չին թողնում է, ընկնում է ճամփի տակի անտառն ու՝ երկու ոտն ուներ երկուսն էլ փոխ է առնում՝

փախչում:

Բախտդ սիրեմ Քաջ Նազար. գորգոռալով գալիս է տեսնում մի թամբած ձի ճամբի մեջտեղը կանգնած իրեն է սպասում: Իշից վեր է գալի ես թամբած ձիուն նստում ու շարունակում իր ճամբեն:

3.

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գիւղ. ինքը գիւղին անծանօթ, գիւղն՝ իրեն: Ո՞ւր գնայ, ուր չի գնայ: Մի տանից գուռնի ձէն է լսում. ձին քշում է ես ձէնի վրայ, գնում է ընկնում մի հարսանքատուն:

-Բարի օր ձեզ:

-Ա՛յ Աստծու բարին քեզ, բարով հազար բարի եկար:

Համեցեք հա, համեցեք. դե դոնախն Աստծունն է. սրան տանում են իր դրօշակով սուփրի վերի ծերին բազմեցնում: Աչքդ են բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը - թէ ուտելիք, թէ խմելիք:

Հարսանքատրները հետաքրքրում են իմանան, թէ ով է ես տարօրինակ անծանօթը: Ներքի ծերից մինը բոթում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բոթում, էսպէս հերթով իրար բոթելով ու հարցնելով բանը մնում է վերի ծերին նստած տերտերին: Տերտերը մի կերպով դոնախի դրօշակի վրայ կարդում է.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Կարդում է ու զարհուրած յայտնում է իր կողքի նստածին, սա էլ իր կողքի նստածին, սա էլ երրորդին, երրորդը չորրորդին. էսպէսով հասնում է մինչեւ դռան տակը ու ամբողջ հարսանքատունը դրմբում է թէ՛ բա՛ չես ասիլ նորեկ դոնախն է ինքը.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար:

-Քաջ Նազարն է հա՛...-բացագանչում է պարծենկոտի մինը: Ի՛նչքան է փոխուել. միանգամից լաւ չճանաչեցի...

Եւ մարդիկ են գտնում, որ պատմում են նրա արած քաջագործութիւնները, հին ծանօթութիւններն ու միասին անցկացրած օրերը:

-Հապա ի՞նչպէս է, որ էսպէս մարդը հետը ոչ մի ծառայ չունի, զարմանքով հարցնում են անծանօթները:

-Էդպէս է դրա սովորութիւնը, ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ ես հարցրի, ասա՛ ծառան ի՞նչ են անում, ամբողջ աշխարհքն ին՝ ծառան է ու ին՝ ծառան:

-Հապա ինչպէս է, որ մի կարգին թուր չունի, ես ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել:

-Շնորհքն էլ հենց դրա մեջն է՛, որ ես ժանգոտ երկաթի կտորով մին զարկես ջարդես հազար, թէ

չէ լաւ թրով-ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում խմում է Քաջ Նազարի կենացը: Իրենց միջի խելօքն էլ դուրս է գալի ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը, կարօտ էինք երեսդ տեսնելու եւ ահա էսօր բախտաւոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մէջ: Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալի: Ժողովրդականները խորհրդաւոր իրար աչքով են անում, հասկանում են, թէ էդ հառաչանքն ու ձեռքի թափ տալը ինչքան բան կրնշանակէր...

Աշուղն էլ, որ էնտեղ էր, ձեռաց երգ է յօրինում ու երգում:

Բարով եկար, հազար բարի,
Հրգօր արծիւ մեր սարերի,
Թագ ու պարծանք մեր աշխարհի,
Անյաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար:

Խեղճ տրկարին դու ապաւէն,
Ազատ կանես ամեն ցաւէն,
Մեզ կրփրկես անիրաւէն,
Անյաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար:

Մատաղ ենք մենք քո դրօշին,

Մէջքիդ թրին, տակիդ ուշին,
Նրա ոտին, պոչին, բաշին,
Անյաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար:

Ու ցրելով հարբած հարսանքաւորները տարածում են ամեն տեղ, թէ գալիս է
Անյաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Պատմում են նրա զարմանալի քաջագործութիւնները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը: Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար:

4.

Հարսանքատնից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամբէն: Գնում է հասնում մի կանանչ դաշտ: Էս կանանչ դաշտում ձին թողնում է արածի, դրօշակը տնկում է, ինքն էլ դրօշակի շաքունը պառկում քնում:

Դու մի՛ ասիլ օխտը հսկայ եղբայրներ կան, օխտը աւազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամբոցն էլ մօտիկ սարի գլխին է: Էս հսկաները վերեւից մտիկ են տալիս՝ որ մի մարդ եկել է իրենց հանդում վեր է եկել: Շատ են զարմանում, թէ էս ինչ սրտի տէր մարդ պէտք է լինի, քանի գլխանի, որ առանց քաշելու եկել է իրենց հանդում հանգիստ վեր եկել ու ձին էլ բաց թողել: Ամեն մինը մի գուրգ

ուներ քառասուն լորանոց: Էս քառասուն լորանոց
գուրգները վերցնում են գալի: Գալիս են ի՞նչ են
տեսնում. հրէս մի ձի արածում է, մի մարդ կողքին
քնած, գլխավերելը մի դրօշակ տնկած, դրօշակի
վրէն գրած.

Անյառք հերոս Քաջրն Նազար,
Որ մին գարկի՝ ջարդի հազար:

Վա՛յ, Քաջ նազարն է՛... Մատները կծում են
հսկաներն ու մնում են տեղները սառած: Դու մի՛
ասիլ հարբած հարսանքատրների տարածած լուրը
սրանց էլ է լինում հասած: Էսպէս թուքները ցա-
մաքած, չորացած սպասում են, մինչեւ Նազարն
իր քունն առնում է ու զարթնում. որ զարթնում է,
աչքերը բաց է անում, տեսնում գլխավերելը քառա-
սուն լորանոց գուրգները ուսներից օխտն ահռելի
հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ չի մնում:
Մտնում է իր դրօշակի ետեւն ու սկսում է դողալ,
ոնց որ աշունքւայ տերերը կողոպտայ: Էս հսկաները
որ տեսնում են սա գունատուեց ու սկսեց դողալ,
ասում են՝ բարկացաւ, հիմի որտեղ որ է մի գարկով
օխտիս էլ կրսպանի, առաջին գետին են փռում
ու խնդրում են.

Անյառք հերոս Քաջրդ Նազար,
Որ մին գարկես՝ ջարդես հազար:

Մենք լսել էինք քո ահաւոր անունը, տեսու-
թեանդ էինք փափագում. այժմ բախտաւոր ենք,



որ քո ոտով ես եկել մեր հողը: Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ օխտն ախպէր ենք, ահա մեր ամբոցն էլ էն սարի գլխին է՝ մէջը մեր գեղեցիկ քոյրը: Աղաչում ենք շնորհ անես գաս մեր հացը կտրես...

Էստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք էլ դրօշակն առած առաջն են ընկնում ու հանդիսաւոր տանում են իրենց ամբոցը: Տանում են ամբոցում պահում պատում թագաւորին վայել պատով, ու էնքան են խօսում նրա քաջագործութիւններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քոյրը սիրահարում է վրէն: Ինչ ասել կուզի՝ յարգն ու պատիւն էլ հետն ատելանում է:

5.

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրայ: Ո՞վ կըսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ: Իհարկէ Քաջ Նազարը կսպանի: Էլ ո՞վ սիրտ կանի վագրի դէմ գնայ: Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի. վերելը մի Աստուած, ներքելը մի Քաջ Նազար:

Վագրի անունը լսելուն պէս Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի ետ գնայ իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են թէ վազում էր, որ գնայ վագրին սպանի: Նշանածը բռնում է կանգնեցնում, թէ՛ ո՞ր էս վազում էդպէս առանց

զէնքի, զէնք առ հետդ էնպէս գնա: Չէնք է բերում տալիս իրեն, որ գնայ իր փառքի վրայ մի քաջութիւն էլ ատելացնի: Նազարը զէնքն առնում է դուրս գնում: Գնում է անտառում մի ծառի բարձրանում, վրէն տապ անում, որ ոչ ինքը վագրին պատահի, ոչ վագրը իրեն: Ծառի վրայ կուչ է գալի ու Նազարն ո՞վ կտայ - հոգին դառել է կորկի հատ: Հակառակի նման անտէր վագրն էլ գալիս է հէնց էս ծառի տակին պառկում: Նազարը որ վագրին չի տեսնում՝ լեղին ջուր է կտրում, աչքերը սեւանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու, թրըմփ, ծառից ընկնում է գազանի վրայ: Վագրը սարսափած տեղիցը վեր է թռչում, Նազարն էլ վախից կպչում է սրա մէջքին: Էսպէս զարհուրած Նազարը մէջքին կպած էս խրտնած վագրը փախչում է, ոնց է փախչում, էլ սար ու ձոր, քար ու քօլ չի հարցնում:

Մարդիկ մին էլ տեսնում են, վահ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է:

-Հա՛յ-հարա՛յ, եկէ՛ք հա, եկէ՛ք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել հեծել... տէ՛ք հա տէ՛ք... Սրտաւորում են, ամենքը մի կողմից հարայ-հրոցով, հռհռոցով յարձակում են խանչալով, թրով, թանքով, քարով, փէտով տալիս են սպանում:

Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացում է-ափսո՛ւ, ասում է, ընչի՞ սպանեցիք, զօռով մի ձի էի

շինել նստել... Էնքան պէտք է քշէի ո՞ր...

Լուրը գնում է հասնում է ամբողջը: Մարդ, կին, մեծ, պատիկ՝ ժողովուրդը դուրս է թափում Նազարին ընդունելու: Վրէն երգ են կապում ու երգում:

Էս աշխարհքում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կրիճի քեզ հաւասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ինչպէս ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թռար հասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ահեղ վագրին
արիւր քո ձին,
Հեծար անցար դու սարէսար,
Ո՞վ Քաջ Նազար:

Մեզ փրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարեդար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգերով զովեցին թագաւորին ու թագուհուն:

-Լուսրնկան նոր սարն էլաւ,
Էն ո՞ւմ նըման էր:

-Լուսրնկան նոր սարն էլաւ,
Էն Քաջ Նազարն էր:

-Արեգակ նոր շաղէշաղ,
Էն ո՞ւմ նըման էր:

-Արեգակ նոր շաղէշաղ,
Էն իր նագ-եարն էր:

Մեր թագաւորն էր կարմիր,
Իրեն արեւն էր կարմիր,
Թագն էր կարմիր, հա՛յ կարմիր,
Կապէն կարմիր, հա՛յ կարմիր,
Գօտին կարմիր, հա՛յ կարմիր,
Սօլեր կարմիր, հա՛յ կարմիր,
Թագուհին կարմիր, հա՛յ կարմիր,
Կարմիր թագուհուն բարեւ,
Կարմիր թագուրին արեւ:

Շնորհաւոր, շնորհաւոր,
Քաջ Նազարին շնորհաւոր,
Իր նագ-եարին շնորհաւոր,
Ողջ աշխարհին շնորհաւոր:

6.

Դու մի՛ ասիլ էս աղջկանը ուզած է լինում

հարեւան երկրի թագաւորը: Որ իմանում է իրեն չեն տւել՝ ուրիշի հետ են ամուսնացրել՝ զօրք է կապում պատերազմով գալիս է օխտն ախպօր վրայ:

Էս օխտը հսկան գնում են Քաջ Նազարի մօտ, պատերազմի լուրը յայտնում են, գլուխ են տալի առաջը կանգնում՝ հրաման են խնդրում:

Պատերազմի անունը որ լսում է՝ սարսափում է Նազարը, դուրս է պրծնում, որ փախչի ետ գնայ իրենց գիւղը: Մարդիկ կարծում են ուզում էր իսկոյն դուրս վազել յարձակելու թշնամու բանակի վրայ: Առաջն են ընկնում, բռնում են, խնդրում, թէ ախր առանց զենքի ու զրահի մենակ ո՞ր ես գնում, ի՞նչ ես անում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է:

Բերում են զենք ու զրահ են տալի, կնիկն էլ եղբայրներին խնդրում է, որ չթողնեն Նազարին իր քաջութիւնից տարած մենակ յարձակի թշնամու զօրքի վրայ: Եւ լուրը գնում տարածում է զօրքի ու ժողովրդի մէջ, լրտեսների միջոցով էլ հասնում է թշնամուն, թէ Քաջ Նազարը մենակ առանց զենքի թռչում էր դէպի պատերազմի դաշտը, հազիւ են կարողացել զսպել ու շրջապատած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամեհի նժոյգ ձի են բերում Նազարին նստեցնում վրէն: Ոգետրած զօրքն էլ հետը վեր է կենում ահագին աղմուկով, կեցցէ՛ Քաջըն Նազար... Մահ թշնամուն...



1040 - 2006



Նազարի տակի նժոյգը, որ տեսնում է վրէժն հնչ անպէտքի մի՛նն է նստած՝ խրխնջում է, գլուխն առնում ու թռչում առաջ, ուղիղ դէպի թշնամու բանակը: Չօրքերը կարծում են Քաջ Նազարը յարձակւեց, ուռռա՛ են կանչում ու իրենք էլ ետեւից յարձակւում ամենայն սաստկութեամբ: Նազարը որ տեսնում է չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում վեր ընկնի, ձեռք գցում է, ուզում է մի ծառից փաթաթի, դու մի՛ ասիլ ծառը փթած է, մի գերանաչափ ճիւղը պոկ է գալիս մնում ձեռին: Թշնամու զօրքերը, որ առաջուց համբար լսել էին ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են՝ էլ փորձերումը սիրտ չի մնում. երես են շուռ տալիս, - փախի, որ փախի, թէ մարդ էս գլուխդ պրծացրու, որ Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս է...

Էդ օրը թշնամուց ինչքան կոտորում է կոտորում, մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի ոտի տակին, յայտնում են իրենց հպատակութիւնն ու հնազանդութիւնը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամբոցն է վերադառնում: Ժողովուրդը յաղթական կամարներ է կապում, աննկարագրելի ոգևորութեամբ, ուռաներով եւ կեցցէներով, երգով ու երաժշտութիւնով, աղջիկներով ու ծաղիկներով,



3079

500

պատգամաւորութիւններով ու ճառերով առաջն է
դուրս գալի, էնպէս մի փառք ու պատիւ, որ Նազարը
մնացել էր ապշած ու շըշկլւած:

Էսպէս առքով-փառքով էլ բերում հրատարակում
են իրենց թագաւոր ու բազմեցնում են թագաւորի
թախտին: Քաջ Նազարը դառնում է թագաւոր, էն
հսկաներից ամեն մէկին էլ մի պաշտօն է տալիս:
Մին էլ տեսնում է աշխարհը իր բռան մէջ:

Ասում են մինչեւ էսօր էլ դեռ ապրում ու
թագաւորում է Քաջ Նազարը: Ու՛ երբ քաջութիւնից,
խելքից, հանճարից մօտը խօսք են գցում՝ ծիծաղում
է, ասում է.

-Ի՛նչ քաջութիւն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար.
դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդու բախտն
է: Բախտ ունե՞ս՝ քէֆ արա...

Եւ ասում են, մինչեւ էսօր էլ քէֆ է անում Քաջ
Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրայ:




120 13

<< Ազգային գրադարան



NL0033387



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (1869 – 1923)

«Ն Ա Յ Ի Ր Ի» Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր Թ Ի Ի 2

Ստամպոլու համար դիմել
«ՆԱՅԻՐԻ» Գրատուն-Հրատարակչական
Թեհրան, Էնղելար պող. Քալեչ, համար 1022

PRINTED IN IRAN
PUBLISHED BY NAIRI PUBLISHING
1022, Enghelab Ave., TEHRAN 11339 - IRAN

Կաճ Նազար (Նազար Բեհլուան) : Նամ Կտաբ
Հուանս Կումանյան : ՆույսնԵ
Անտշարատ Նաիրի : Նաշր
3000 ՆսխԵ : Ներաձ
Դոմ : Նոյտ Կճաբ
Կճաբ : ԿճաբխանԵ Բարայի - ԿԵԽրան 1374
2000 Րեյալ : Գեյտ



Ն Ա Յ Ի Ր Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Ի Ի Ն

این کتاب با استفاده از کاغذ حمایتی وزارت فرهنگ و ارشاد اسلامی به چاپ رسیده است